ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

# ՀՐԱՀԱՆԳ

## ՁԻԱԳԼԽԻ ԱՆՁՆԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԱՐԽԻՎ

ՅԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌՇԻՆԻ ՏՊ.

1936

30 JAN 2018

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Խ.Ս.Հ. Միության Հողագործության
Ժողկոմի Տեղակալ Ա. ՄՈՒՐԱԼՈՎ
2/2 1936 թ.

# I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ձիագլխի անձնագրման (պասպորտիզացիայի) գծով ընթացիկ աշխատանքը կայանում է՝

ա) Տալ նորածին մտրուկների համար անձնագրեր (պասպորտներ).

բ) Տալ անձնագրեր այն ձիերի համար, վորոնք մատղաշների խմբից փոխադրվում են մեծահասակ ձիերի խումբը՝ նրանց յերեք տարին լրանալուց հետո (օրինակ 1936 թ. ընթացքում պետք է՝ տալ 1933 թ. ծնվածներին).

գ) Տալ անձագրի պատճենը կորցրածի կամ գողացածի փոխարեն.

դ) Տալ անձագրեր այն ձիերի համար, վորոնք վորևե պատճառով դուրս են մնացել անձնագրումից.

յե) Փոխարինել «հովատակի» անձնագիրը «ամորձատածի» անձնագրով (հովատակի ամորձատման դեպքում).

զ) Գրանցել ընկած (սատկած) ձիերին.

է) Գրանցել ձիերի գնումներն ու վաճառքները.

ը) Ներկայացնել հաշվետվություն ձիագլխի ընթացիկ անձնագրման մասին.

2. Գյուղական վայրերում ձիագլխի անձնագրման ընթացիկ աշխատանքը դրվում է գյուղական խորհրդի նախագահի վրա, ձիատերերին անձնագրերը տրվում են վաղորոք վորոշված օրերին (վոչ պակաս շաբաթը մեկ անգամ)։

Այդ օրերը գյուղխորհրդի նախագահն իրեն օգնելու համար վերցնում է կոլտնտեսության անդամներից կամ մոտակա ՄՏԿ,



խորհտնտեսության, անասնաբուժարանի, մարզման կայանների, պետական բուծարանային ախոռի, ձիամթերման բազաների և շրջանային հողային բաժինների աշխատողներից՝ զոոտեխնիկական կամ անասնաբուժական կրթություն ունեցող աշխատողի, կամ փորձված (պրակտիկ) ձիաբուծի, վորը ծանոթ է ձիերի ցեղերի, տեսակների և չափումների վորոշման աշխատանքներին։

3. Քաղաքներում ձիերի ընթացիկ անձնագրումը դրվում է քաղաքային հողբաժնի հաստիքային աշխատողի վրա, վորը ծանոթ է ձիաբուծությանը։ Քաղաքներում անձնագրերը տրվում են ամեն օր։

4. Գյուղխորհուրդներին ու քաղ. հողբաժիններին հրահանգներ տալը և նրանց աշխատանքի ստուգումը ձիերի ընթացիկ անձնագրման գծով, ինչպես և նրանցից հաշվետվություններ այդ գծով հավաքելը կատարվում է շրջհողբաժնի միջոցով ի դեմս նրա պատասխանատու պասպորտիստի (անձնագրման գծով աշխատողի) շրջանային զոոտեխնիկի. Նրա վրա յե դրվում և վարչական բաժանմամբ գյուղական կամ քաղաքային խորհուրդներին չ՝ամրացված և նույնպես շրջանային կենտրոններում գտնվող կազմակերպություններին, հիմնարկներին և այլնին պատկանող ձիագլխի ընթացիկ անձնագրումը։

5. Հողբաժինների պատասխանատու պասպորտիստները պարտավոր են սույն հրահանգն ստանալուն պես, ընդունել արձանագրություններով ունեցած պահեստի (в запасе) մաքուր անձնագրերը, անձնագրերի գրանցման գրքերն ու ձիերի անձնագրման մասին հիմնական հրահանգները (1934 թ. դեկտեմբերի 27-ի)։ Արձանագրության մեջ մանրամասն ցույց տալ ընդունած մաքուր անձագրերին ըստ ձիերի առանձին խմբերի (հովատակ, զամբիկ և այլն) և նույնպես գրանցման գրքերի ու հրահանգների քանակը։ Պահեստի մաքուր անձնագրերն հանձնվում են առանց դրամի։

6. Անձնագրման գծով ընթացիկ աշխատանքի ղեկավարությունը՝ շրջանում (մարզում, հանրապետությունում) և հավասարապես այդպիսիների ճիշտ անցկացման ու շրջաններին իր ժամանակին, անհրաժեշտ քանակությամբ մաքուր անձնագրերի մատակարարման պատասխանատվությունը դրվում է շրջանային (մարզային, հանրապետական) համապատասխան հողային մար-

մինների ձիաբուծական վարչությունների վրա։

Ծանոթություն.—Ձիաբուծական վարչություններում անձնագրման գծով ոպերատիվ աշխատանքը դրվում է մասսայական ձիաբուծությամբ ու ձիօգտագործմամբ զբաղվող զոոտեխնիկի վրա։

7. Ձիերի անձնագրման ընդհանուր ղեկավարությունն ու շրջաններին մաքուր անձնագրերի մատակարարումը «Սոյուզորգուչոտ»-ի մարմինների միջոցով ըստ տեղերից ստացված հայտերի՝ դրվում է Խ.Ս.Հ. Միության ՀԺԿ-ի ձիաբուծական գլխավոր վարչության վրա։

## 2. ՄԱՔՈՒՐ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Կտրականապես արգելվում է՝ հիմնարկներին, կազմակերպություններին, պաշտոնական և անհատ անձանց վորևէ նշումներ, ուղղումներ և լրացումներ անելու, ինչպես շապիկի, նույնպես և անձնագրի թերթերի վրա, այսպես օրինակ՝ նշումներ ձիու գերության մասին, նրա ամրացումը վորոշ ձիապահի, բանեցնողի և այլն։

2. Ձիու անձնագրի համապատասխան սյունյակներում լրացվում են միայն այն կետերը, վորոնք տպված են, ընդվորում նրանց լրացնելու իրավունք ունեն՝ պատասխանատու պասպորտիստները, անասնաբույժերը, զոոտեխնիկները, զինվորական ստուգող հանձնաժողովների նախագահներն ու զինվորական հիմնարկի ներկայացուցիչները, անձնագրման մասին (1934 թ. դեկտեմբերի 27-ի) հիմնական հրահանգներով վորոշված կարգով։

3. Մեծահասակ ձիերի խումբը փոխադրվող մատղաշի (3 տարին լրացած) անձնագրերը փոխարինելիս, նույնպես և «հովատակ»-ի անձնագրերը «ամորձատած»-ի անձնագրով փոխարինելիս (ամորձատման դեպքում), նոր տրվելիք անձնագրի վրա դրվում է ապա հերթական միութենական ըստ կարգի նոմերը «Բ. Բ.» շիֆրով և վոչ թե այն՝ վոր դրված է յեղել փոխարինվող անձնագրի վրա։

## 3. ՄԱՔՈՒՐ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Ձիերի մաքուր անձնագրերը՝ խիստ հաշվառման փաստաթղթեր են և դրամական փաստաթղթերի հետ հավասարապես



II-28058 գր

ընդունվում են, պահվում և ծախսվում են, ընթացիկ անձնագրումն անցկացնող այսինքն՝ գյուղխորհրդի նախագահների (գյուղական վայրերում), քաղ. հողբաժինների (քաղաքներում) պատասխանատու պասպորտիստների (զոոտեխնիկների) և շրջհողբաժինների (շրջանային կենտրոններում) պատասխանատու պասպորտիստների անձնական պատասխանատվությամբ։

2. «Սոյուզորգուչոտ»-ի մարմիններում մաքուր անձնագրեր պատրաստելիս և ուղարկելիս շրջաններին նրանց պահպանման համար պատասխանատու յեն՝

«Սոյուզորգուչոտ»-ի պահեստապետներն ու տպարանի վարիչները։

Ձիաբուծական գլխավոր վարչության ցուցակներով առանձին հողբաժինների հասցեներով ուղարկվելիք մաքուր անձնագրերի համար «Սոյուզորգուչոտ»-ի պահեստների կամ տպարանների կողմից դուրս է գրվում բեռնագիր, վորի մեջ ճիշտ նշվում է ուղարկվող մաքուր անձնագրերի քանակն ըստ ձիերի առանձին խմբերի (զամբիկ, հովատակ և այլն)։

Շրջհողբաժնի պատասխանատու պասպորտիստը համարում է «Սոյուզորգուչոտ»-ից ստացված մաքուր անձնագրերը, կազմում է արձանագրություն ստացված քանակի մասին և իր հերթին քաղհողբաժիններին ու գյուղխորհուրդներին ուղարկելիս՝ բեռնագրի մեջ նշում է մաքուր անձնագրերի ճիշտ քանակը։

Քաղհողբաժիններում և գյուղխորհուրդներում անձնագրման գծով պատասխանատու անձինք, վորոնք շրջհողբաժիններից ստանում են մաքուր անձնագրեր, պարտավոր կարգով համարում են՝ և կազմում են արձանագրություն ստացված քանակի մասին։ Անձնագրերի փաստացի քանակի ու բեռնագրում նշված քանակի մեջ տարբերություն ունենալու դեպքում, բոլոր վերոհիշյալ ինստանցիաները (քաղհողբաժին, գյուղխորհուրդ, շրջհողբաժին և այլն), անձնագրերի պակասորդի մասին կազմված արձանագրությունների պատճեններն ուղարկում են միլիցիայի մարմիններին, հայտնաբերելու հանցավորներին ու նրանց պատասխանատվության յենթարկելու։

3. Մաքուր անձնագրերի կորցման դեպքում, նրանց պահպանման վայրում, «Սոյուզորգուչոտ»-ի տպարաններում

և պահեստներում և հավասարապես շրջհողբաժիններում, քաղհողբաժիններում և գյուղխորհուրդներում անհապաղ կազմվում է արձանագրություն գողացված անձնագրերի մասին ու հանձնվում է միլիցիայի մարմիններին հետախուզելու հանցավորներին։

Յեթե գողացված մաքուր անձնագրերը յեղել են համարագրված՝ հայտարարվում է թերթերում գողացված անձնագրերի համարների ու սերիաների անվավերության մասին։

Անկախ դրանից, շրջհողբաժինների, քաղ. հողբաժինների և գյուղխորհուրդների անձնագրման գծով պատասխանատու աշխատողները, յենթարկվում են պատասխանատվության անփութության համար, վորպիսին կարող է նպաստել փաստաթղթերի ու ձիյու գողացման ի չարը գործադրումներին։

4. Գյուղխորհուրդներում ու քաղհողբաժիններում՝ լրացնելիս փչացած անձնագրերն ու ձիատերերի կողմից հանձնված ընկած ձիյերի լրացրած անձնագրերը, յեռամսյակում մեկ անգամ, ընթացիկ անձնագրման հաշվետվության հետ միաժամանակ ուղարկվում են շրջհողբաժիններին։ Փչացրած ու ընկած ձիյերի անձնագրերի քանակը նշվում է հաշվետվության՝ «վոչնչացված է խոտանված (забракованные) մաքուր անձնագրեր» և «վոչնչացված է ընկած ձիյերի անձնագրեր» սյունակներում։

5. Շրջհողբաժնի պատասխանատու պասպորտիստը շրջ. հողբաժնի վարիչի մասնակցությամբ, յեռամսյակում մեկ անգամ փչացրած ու ընկած ձիյերի անձնագրերի վոչնչացման մասին կազմում է արձանագրություն ցույց տալով շրջանային (մարզային, հանրապետական) ձիաբուծական վարչություններին ուղարկվող հերթական հաշվետվության մեջ վոչնչացրած անձնագրերի քանակը, իսկ անձնագրերն այրվում են։

6. Գյուղխորհուրդներին ու քաղ. հողբաժիններին ձիատերերի կողմից հանձնված գողացված ձիյերի լրացրած անձնագրերը, անձնագրման գծով աշխատողներն ուղարկում են շրջհողբաժիններին, վորտեղ պահվում են 5 տարի, սկսած ձիյու գողացման օրից, վորից հետո վոչնչացվում են (յեթե գողացված ձին չի գտնվի), հավասարապես ընկած ձիյերի անձնագրերի հետ։ Յեթե գողացված ձին գտնվում է, ապա նրա անձնագիրը վերադարձվում է ձիատիրոջը։



# 4. ՄԱՔՈՒՐ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՊԱՏՎԵՐԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Շրջհողբաժինների պատասխանատու պասպորտիստները տարեկան մեկ անգամ, վոչ ուշ քան սեպտեմբերի 1-ը, պարզում են մաքուր անձնագրերի պահանջը ըստ ձիյերի առանձին խմբերի, յելնելով այդպիսիների ունեցած պահեստի առկայից (наличия запаса) և սպասվող մտրուկների աճից (հաշվելով շրջանում ծածկված զամբիկների քանակը) հաշվի առնելով նույնպես մեծահասակ ձիյերի խումբը փոխադրվող 3 տարին լրացած մատղաշի և ամորձատման յենթակա հովատակների քանակը (մոտավորապես)։ Բացի դրանից, պարզվում է գրանցման գրքերի ու անձնագրման հաշվետվությունների բլանկների պահանջը։

Հայտնաբերած պահանջների հիման վրա հողբաժինները հայտ են ներկայացնում շրջանային (մարզային հանրապետական) ձիաբուծական վարչություններին հետևյալ տարում բլանկներով մատակարարելու համար, իսկ ձիաբուծական վարչությունները, վոչ ուշ քան նոյեմբերի 1-ը համապատասխան հայտ են ներկայացնում ԽՍՀՄիության ԺԿԽ-ի ձիաբուծական գլխավոր վարչությանը ըստ շրջանների, վորովհետև բլանկները «Սոյուզորգուչոտ»-ի պահեստներից ուղարկվելու յեն անմիջականորեն հողբաժինների հասցեներով վերադիր վճարով (налож. платежом)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— ա. 1936 թ. համար պահանջվող բլանկների հայտը հողբաժինները ներկայացնում են ձիաբուծական վարչություններին 1936 թ. մայիսի 30-ին իսկ վերջինը՝ ձիաբուծական գլխավոր վարչությանը վոչ ուշ հունիսի 30-ից։

բ) Հայտերում պետք է ցույց տալ ինչ լեզվով են տպագրվելու բլանկները։

2. ԽՍՀ Միության ՀԺԿ-ի ձիաբուծական գլխավոր վարչությունը ստացված հայտերի հիման վրա բլանկներ է պատվիրում «Սոյուզորգուչոտ»-ին և պատվերի հետ միաժամանակ տալիս է ցուցակն հասցեներով, վորոնցով պատրաստված բլանկները

պետք է ուղարկվեն «Սոյուզորգուչոտ»-ի պահեստներից, անմիջականորեն հողբաժիններին վերադիր վճարով:

## 5. ԱՆՁՆԱԳՐՄԱՆ ԳԾՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Գյուղխորհուրդներում ու քաղ. հողբաժիններում անձնագրման գծով պատասխանատու անձինք նոր յեռամսյակի ամսու 1-ին լրացնում են հաշվետվության բլանկը ԺՏՀ-ի կենտրոնական վարչության կողմից հաստատված ձևով (տես աղյուս 1) և ուղարկում են հաշվետվությունը իրենց շրջհողբաժիններին: Հաշվետվության հետ միաժամանակ հողբաժիններին ուղարկվում են փչացրած ու խոտանված ձիու անձնագրերը և նույնպես ձիատերերի կողմից հանձնված՝ ընկած ու գողացված ձիերի անձնագրերը: Դրա հետ միասին ուղարկվող գողացված ձիերի անձնագրերի քանակը ցույց է տրվում հատուկ սյունյակում:

2. Շրջհողբաժինների պասպորտիստները՝ նույն այդ կարգով կազմում են հաշվետվություն նոր յեռամսյակի ամսու 5-ին, ուղարկում են շրջանային (մարզային, հանրապետական) ձիաբուծական վարչությանը և միաժամանակ վոչնչացնում են փչացրած ու ընկած ձիերի անձնագրերը սույն հրահանգի 3-րդ հոդվածի 5-րդ կետի կարգով:

3. Ձիաբուծական վարչությունների զոոտեխնիկները, վորոնք զբաղվում են մասսայական ձիաբուծությամբ և ձիօգտագործմամբ, կազմում են հաշվետվություն, այդ նույն ձևով և ուղարկում են Խ.Ս.Հ. Միության ՀԺԿ-ի գլխավոր ձիաբուծական վարչությանը նոր յեռամսյակի ամսու 10-ին:

## 6. ՁԻԱԳԼԽԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՆՁՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՎԱՔՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Ձիագլխի ընթացիկ անձնագրման կարգով ձիատերերին անձնագրեր տալու, նույնպես ձիերի գնումներն ու վաճառքներ գրանցելու և կորցրած կամ գողացված անձնագրերի փոխարեն պատճենները տալու համար հավաքված բոլոր միջոցներից՝



գյուղխորհուրդներն ու քաղ. հողբաժինները թողնում են իրենց տրամադրության տակ 35%-ը և այդ միջոցներով վարձատրում են ընթացիկ անձնագրումն անցկացնելու համար հրավիրվող՝ գյուղխորհրդի նախագահին օգնելու անձնագրման գծով աշխատողին ու մասնագետ ձիաբույծին (գյուղական վայրերում), համաձայն սույն հրահանգի 1-ին հոդվածի 4-րդ կետի, հավաքված միջոցների մնացած 65 տոկոսը գյուղխորհուրդներն և քաղ. հողբաժինները յուրաքանչյուր ամսու 1-ին փոխադրում են շրջհողբաժիններին՝ նրանց հատուկ ընթացիկ հաշվին:

2. Ընթացիկ անձնագրման և ձիերի գնումների-վաճառքների գրանցման համար, գյուղխորհուրդների և քաղհողբաժինների կողմից շրջհողբաժիններին փոխադրված գումարներից, հավասարապես նույն այդ աշխատանքի համար, իրենց շրջհողբաժինների կողմից հավաքած, վարչական բաժանմամբ գյուղխորհրդին կամ քաղխորհրդին չամրացված, շրջանային կենտրոնի ու հիմնարկների գումարներից, հողբաժինները թողնում են իրենց տրամադրության տակ 50%-ը սկզբնական մուտքի, այսինքն ձիատիրոջից ստացած մեկ ռուբլուց 50-ական կոպեկ և այդ միջոցներով լրացուցիչ վարձատրվում է շրջհողբաժնի պատասխանատու պասպորտիստի աշխատանքը, վճարվում է նույնպես ամբողջ շրջանի համար անձնագրման գծով ստացված բլանկների արժեքները և տրվում է փոքր գյուղխորհուրդներում ու քաղհողբաժիններում անձնագրման գծով կատարված ծախսերի դոտացիա:

Սկզբնական մուտքի գումարների մնացած 15%-ը, այսինքն ձիատիրոջից ստացված մեկ ռուբլուց 15 կոպեկը հողբաժիններն յուրաքանչյուր ամսու 5-ին փոխադրում են շրջանային (մարզային-հանրապետական) ձիաբուծական վարչության տրամադրության տակ, նրա հատուկ ընթացիկ հաշվին:

Ծանոթություն.—Գյուղխորհուրդներին չամրացված շրջանային կենտրոնում և հիմնարկներում անմիջականորեն շրջհողբաժինների պասպորտիստների կողմից ձիատերերից հավաքած գումարներից շրջհողբաժինների տրամադրության տակ մնում է վոչ թե 50 տոկոս, այլ 35 տոկոս, այսինքն ձիատիրոջից ստացած մեկ ռուբլուց 35-ական կոպեկ:

3. Ձիերի ընթացիկ անձագրման համար շրջհողբաժիններից մուտք յեկած գումարներից, շրջանային (մարզային հանրապե-

տական) ձիաբուծական վարչությունները պահում են իրենց տրամադրության տակ սկզբնական մուտքի 15 տոկոսը, այսինքն ձիատիրոջից վերցրած մեկ ռուբլուց 15 կոպեկ և այդ միջոցները ծախսում են՝ լրացուցիչ բեռնվածությունը վարձատրելու անձնագրման գծով, որը ընկնում է մասսայական ձիաբուծության գծով՝ զոոտեխնիկի վրա, ընթացիկ անձնագրման ոպերատիվ ղեկավարության գծով գործուղման ծախսերը վճարելու, իսկ միջոցների մնացորդները ծախսվում է կոլտնտեսային ձիաբուծության կադրերի պատրաստման համար։

Ծանոթություն.— Դաշնակից, ինքնավար հանրապետությունների և մարզերի ձիաբուծական վարչությունները, որոնք իրենց սիստեմում ունեն շրջանային (областной) հանրապետական կամ շրջանային (окружной) ձիաբուծական վարչություններ, ինչպես օրինակ ՌՍՖՍՀ, Ղազախստան և այլն, պահում են վերջինների տրամադրության տակ սկզբնական մուտքի գումարների 10 տոկոսը, իսկ իրենց տրամադրության տակ պահում են 5 տոկոսը, այսինքն ձիատիրոջից ստացած մեկ ռուբլուց 5-ական կոպեկ։

4. Ընթացիկ անձագրման համար ձիատերերից գանձվում է յուրաքանչյուր տրված անձնագրի ու ձիյու գնումը-վաճառքը գրանցելուն մեկական ռուբլի, իսկ պատճենը տալու համար՝ 3 ռուբլի։

ԽՍՀՄ Հողժողկոմատի գլխավոր ձիաբուծական
վարչության պետ, Խորհրդային Միության Մարշալ՝
(Ս. Մ. ԲՈՒԴՅՈՆՆԻ)



ՁԵՎ 1.

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձիերի ընթացիկ անձնագրման ու անձնագրային բլանկների ծախսման մասին ըստ ________ գյուղխորհրդի (քաղհողբաժնի, շրջհողբաժնի, ձիաբուծական վարչության ________ ________ շրջանի ________ հանրապետության։
193 թ. ________ յեռամսյակի համար։

| Համարը կ. | | Ընդամենը | ԱՅԴ ԹՎՈՒՄ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Հովատակ | Զամբ. | Անթրձ. | Մատղաշ |
| 1 | Հաշվետու ամսում ընդամենը անձագրված են ձիյեր. . . . . | | | | | |
| 2 | Առ 1-ն հաշվետու յեռամսյակի մնում եր անձնագրային բլանկներ . | | | | | |
| 3 | Յեռամսյակի ընթացքում տրված է նոր անձնագրեր . . . . . | | | | | |
| 4 | Յեռամսյակի ընթացքում տրված է անձնագրերի պատճեններ կորցրածների և գողացվածների փոխարեն . | | | | | |
| 5 | Յեռամսյակում փչացրած է և խոտանված անձնագրային բլանկներ (այդպիսիք ուղարկվում են շրջհողբաժիններին ոչնչացնելու համար)։ | | | | | |
| 6 | Առ 1-ն հետեվյալ յեռամսյակի մնում է անձնագրային բլանկներ . . . | | | | | |
| 7 | Հաշվետու յեռամսյակում ձիատերերի կողմից հանձնված է անձնագրեր ընկած ձիյերի համար (անձնագրերն ուղարկվում են հողբաժիններին ոչնչացնելու համար։ . . . . | | | | | |
| 8 | Հաշվետու յեռամսյակում ձիատերերի կողմից հանձնված է անձնագրեր գողացված ձիյերի համար (անձնագրերն ուղարկվում են հողբաժիններին պահելու համար) . . . | | | | | |

Պատասխանատու անձնագրման պետ՝
(Ստորագրություն)

ՀՀ Ազգային գրադարան
NL0937708

2 8 МАЯ 1936
400
11
28098

ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԱՎ. ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ
ՏԵԽՆ. ԽՄԲԱԳԻՐ ՄԱՍԻՍ ՓԱՆՈՍՅԱՆ
ՍՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՎ. ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ

*Գլավլիտ № 1086* *Պատվեր № 18* *Տիրաժ 2000*

ՄՈՌԻ ա5 89/8